

ՅՈՒՑԱԿ «Յ. ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅ»Ի

ՊԼՆՁԵՂԵՆ ԻՐԵՐՈՒ

ՈՐՈՆՔ ՊԵՏԻ ՊԱՀՈՒԻՆ ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ

Թիւ 1

Թաս, լայնք՝ 14 հրդմ., խորք՝ 11.5 հրդմ., կիսակլոր բռնաստեղիով: Ամանին չրթունքին վարի եղերքին, պլխադրով փորագրուած է (բակագրութիւնները բացած եմ). «ՆԱՐԻՆ ՊԱԿԻ ՈՐԴԻ». միւս կողմը «ՍԱՐԳԻՍ»: Ըստ իս՝ հաւաքմանս լաւագոյն կտորներէն է եւ հնագոյններէն մին, զուտ հայ արուեստով, ամբողջապէս փորագրուած: Ամանին վերի զօտին ծանօթ է մեր արուեստին մէջ, նոյնիսկ գորգերու եւ խաչքարերու վրայ: Գծածեւի նմանութիւնը անուրանալի է Լոնտոնի Victoria & Albert թանգարանին մէջ «Պարսկական» նշանակուած՝ հայերէն արձանագրութիւններով, թիւ 428-1876, ԺԹ. դարու վերագրուած պղինձէ թասին գծածեւերուն, որ ունի «ԾԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ԱՌԱՔԵԼ» արձանագրութիւնը եւ թակագիր մը՝ որ գուցէ պարզուի ԱՌԱՔԵԼ: Նոյն հաւաքման մէջ, թիւ M. 718-1910, նման է գծածեւով եւ ԺԵ. դարէն նշանակուած: Երրորդ թաս մը, M. 2-1919, նոյնպէս ԺԵ. դարէն, ունի. «ԿԻՐԱԿ(Ո)ՍԻ Ո(Ր)Դ(Ի) ՍԱՀԱԿ»: Եւ վերջապէս՝ չորրորդ մըն ալ, թիւ 791-1901, նոյնպէս ԺԵ. դարէն, ունի. «ՓԻՐՈՒՄ ՈՐԴԻ ՅՈՎԱՆԷՍ»: Կարժէ ասոնք բոլոր լուսանկարել եւ ուսումնասիրել մեր թիւ 1 պղնձեղէն թասի գծածեւերուն հետ, հայկական արուեստի ապահով հիմ մը վերջնականօրէն հաստատելու համար:

Թիւ 2

Անագապղինձի խառնուրդով՝ շատ ընտիր քաս մը, 20 հրդմ. լայնքով եւ 11.5 հրդմ. խոր, որ կլոր ոտքի մը վրայ կը նստի: Վերի չրթունքին շուրջ ունի զարդագօտի մը, որ ծաղկումով կրկնութիւնն է թիւ 1 թասի վերնագօտին: Շրթունքի գօտին գծածեւերուն մէջ ընդելուզուած է պլխադրերով՝ «ԱԹԱՆԷՍ Թ(ՈՒԱ)Կ(Ա)Ն ՌՀ» (= 1621): Ընտիր վիճակի մէջ է, եւ հաւանաբար՝ թափծու: Կլայեկուած է, որուն հետքերը դեռ կ'երեւան: Ունի աւելի ուշ փորագրուած, ոչ ընտիր, սակայն պարզ յիշատակարան մը, «ԳՐԻԳՈՐ»:

Թիւ 3

Սիրուն պնակ, 19 հրդմ. լայնքով, իր յատակին վրայ նստող: Ունի երեք մասերու բաժնուած զարդածեւեր, որոնցմէ երկուքը հայկական արմաւենեակի տերեւներով, իսկ միւսը գրաւուած է պլխադրի փորագրութեամբ մը. «ԾԱՌՈՒԿ ԹՎ(ԻՆ) ՌՁՁ (= 1637): Կլայեկի հետքեր ունի, սակայն ընտիր վիճակի մէջ է:

Թիւ 4

Գինիի բաժակ, փոքր կիսասեխի մը Երեւոյթով եւ տասը հասուածներով, որոնց միջեւ, մէկ կողմը կայ մասնաւոր ծակ մը, գինեբաժակը կախելու համար, բայց օղակը եւ շղթան այժմ կորուած են: Գեղեցկօրէն քանդակուած մասերով, որոնք հաւանօրէն ժամանակին ոսկեղօծուած իսկ էին: Ունի պլխադրերով քանդակուած յիշատակարան, հինգ սեխամասերու վերին կողմը. «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՄԱՀՏԵՍԻ ԱՐՈՒԹԻՆԻ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍԻՆ Է ԹՎ(ԻՆ) ՌՃՈՆ (= 1696) է»:

Թիւ 5

Կաթի աման, օղակաւոր երկու բլթակներով: Չունի կափարիչ: Բարձրութիւն՝ 25 հրդմ. իսկ լայնք՝ 18: Նախապէս կլայեկուած: Փորագրազարդ չունի: Նստատեղին՝ տափակ: Ունի պարզ փորագրութեամբ, երկու նոճիներու մէջ, կիսապսակ պլխադրերով քառատողեան յիշատակարան, որուն վրայ թռչուն մը թռած է: «ՊՅԵՆԱՃԻ ՈՂԼԻ ՄԱՀՏԵՍԻ ՄԿՐՏԻՉ», եւ արաբագիր՝ \ \ \ \ (հաւանաբար՝ հայկական թուական, որով՝ 1792):

Թիւ 6

Կլոր պնակ, իր յատակին վրայ նստող, 24 հրդմ. լայնքով: Քանդակուած՝ ձուկերով, բոյսերով եւ զարդածեւերով: Պնակին եզերքը՝ կարճ, արաբագիր մանր գրութիւններ, որոնք յայտնապէս վերջը աւելցուած են: Ամանը ժամանակին կլայեկուած է: Կոնակը, ոչ ընտիր արձանագրութեամբ, կը կարդացուի. «ՄԻ(Ր)ԳՈՒՄԻ ՈՐԴԻԿ Է Ա(ստուած) Տ(էր)»:

Թիւ 7

Կլոր պնակ, օղակաւոր, ոտքի վրայ նստած, 21.5 հրդմ. լայնքով: Ունի հաւթածեւ չորս պարզեր, գծածեւերով ընդելուզուած, որոնցմէ մէկը կը պարունակէ հետեւեալ յիշատակարանս, պլխադրով. «ՄԱՀ(ՏԵՍ)Ի ԽԱԶԱՏՈՒՐԻՆ ՌՄԺԴ» (= 1765): Նախապէս կլայեկուած:

Թիւ 8

Կլոբ տափակ ափսէ, շատ կարճ շրթունքով, 35 հրդմ. լայնքով, վարդաքանդակուած: Չարդերուն կեդրոնը՝ վեցանկիւնի աստղ: Ունի գլխադրով յիշատակարան. «ԱՄԱՊԵՏ»:

Թիւ 9

Թաս փոքրիկ, տափակ յատակով, անդարդ. արտաքին շրթունքին՝ ոչ ընտիր փորագրութեամբ՝ կը կարդանք. «Յիշ(ա)տ(ա)կ է ԱՐ ՎԻ (արդեամբ?) ԸՆՁԻԻՔ ԺՈՂ(Ո)ՎՐԴԻ ԵՐ(ՈՒՍԱՂ)ԷՄ Ս(ՈՒՐ)Բ ՅԱԿՈԲԱՅ ԱԹՈՌԻ Զ(Ե)Ռ(ԱԻ)Ք ՆՈՒԻՐԱԿ ՊՈՂՈՍ Վ(Ա)Ր-ԴԱՊԵՏԻ ՌՄԾԳ (= 1804)Ի»: 1937ին գնուած է՝ Երուսաղէմ, երբ հրապարակին վրայ մեծ թիւով կային այս ամաններէն, իբր թէ վանքէն ծախու:

Թիւ 10

Կաթ չափելու ընտիր աման, կլայեկէ բոլորովին մաքրուած եւ ոսկեզոյն սղինձ, 21 հրդմ. լայնքով: Ծորակը լաւ ու կատարեալ: Արտաքին երկու վերի գոտիները՝ զարդափորագրուած: Ծորակին տակ, գլխադրով. «ԱԿՈՓԻ ՈՐԴԻ ՄՈՒՌ(Ա)ԴՆ»:

Թիւ 11

Գեղեցկադրուագ ափսէ, 36 հրդմ. լայնքով: Կեդրոնը՝ փոքր վարդեակ մը. արտաքին շրթունքը փորագրուած է բուսային գծաձեւերով. ունի կլոր բաժանումներ, որոնցմէ մէկուն մէջ արձանագրուած է. «ՆՈՐ ՎԱԼԷ ՈՐԴԻ ՄԿՐՏԻՃ»: Իսկ ափսէին ետեւ կը կարդանք. «Տ(Է)Ր ԴԱ(Ի)ԹԻ ՈՐԴԻ Տ(Է)Ր ՅՈՎՍԷՓ»: Վերջինս, ըստ երեւոյթի, աւելի յետին ստացող մըն է:

Թիւ 12

Անգարդ աման մը, կլայեկուած, 31 հրդմ. լայնքով: Կոնակին ունեցած է, ոչ նուրբ փորագրութեամբ, սա արձանագրութիւնը. «ԳԵՎՈՐԻ ՈՐԴԻ ՅՈՒԱՆԻ ՍԱՐԳՍԻ»: Ասիկա ջանացած են ջնջել, եւ հանդիպակաց կողմը, միշտ ամանին կոնակին, արաբադիր յիշատակարան մը դրուած է, որ ցոյց կու տայ՝ թէ հայ տէրէն վերջ, օտարը ջնջել ջանացած է հայերէն յիշատակարանը եւ իրենը փորագրել տուած:

Թիւ 13

Բաղնիքի պարզ քաս մը, նախապէս կլայեկուած, 15,5 հրդմ. լայնքով եւ 5.5 հրդմ. էն քիչ մը աւելի փորուակ: Արտաքին շրթունք-

քին ունի պարզ ու երկրաչափական զարդերիդ գոտի մը, որուն մէջ կը կարդացուի «ԵՂՍԱՅԲԵՐԹ»:

Թիւ 14

Ամանի նստոց, 13 հրդմ. քարձրութեամբ, կլոր ոտքի վրայ նըստած, զարդաքանդակեալ, կլայեկը մաշած: Վերի շրթունքին, նեղ ու սովորական երկրաչափական զարդանկար գոտիին մէջ փորագրուած է. «Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ԱԲՐԱՀԱՄ»:

Թիւ 15

Պարզ, անգարդ աման, 17 հրդմ. լայնքով: Կոնակը՝ երկաթադիր, երկտող արձանագրութիւն. «Մ(ԱՀ)Տ(Ե)ՍԻ ԱՌԱՔԵԼԻ ՈՐԴԻ ՄԻՔԱՅԼԻ»:

Թիւ 16

Պարզ, անգարդ պնակ, 16 հրդմ. լայնքով: Պնակին յատակը՝ կնիք. «ՄԲ ԱԿԲ 1859»: Պնակին շրթունքին կը կարդանք. «Յ(Ի)Շ(Ա)-Տ(Ա)Կ է Ս(ՈՒՐ)Բ ՅԱԿՈԲԱ»:

Թիւ 17

Պարզ, անգարդ պնակ, սղինձի վատ խառնուրդով, 16.5 հրդմ. լայնքով: Լայն շրթունքին վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ է Ի Ս(ՈՒՐ)Բ ՅԱԿՈԲ ՍԱՂԱՆԱՏՈՒՆ ՅԷ(ՐՈՒՍԱ-ՂԷ)Մ ՄԻՆԱՄ Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(ԵՏ)Ի ՅԱՄԹԵՑՈՅ ՌՃԽԴ (= 1695) ԹՎԻՆ»:

Թիւ 18

Պարզ, անգարդ պնակ մը, կեդրոնը վարդեակով մը, 15 հրդմ. լայնքով: Կոնակը՝ երկտող արձանագրութիւն մը ունի. «ԽՕՃԱ ՊԵՏՐՈՍ»:

Թիւ 19

Թաս մը, 14.9 հրդմ. լայնքով եւ 9 հրդմ. խորունկ. կլայեկը մաշած: Շրթունքի արտաքին գոտիին մէջ կը կարդանք. «Մ(Ա)Հ-(ՏԵՄ)Ի ԱՐՈՒԹԻՆԻ ՈՐԴԻ ՄՕՎՍԷՍԻՆ»:

4. Այս պնակներէն ոմանց կլայեկը շատ վատ ըլլալուն, տաքցնելով՝ բոլորովին հանել տուած եմ, եւ սղինձը հիմա ոսկիի պէս կը փայլի (Ե. Գ.):

Թիւ 20

Կերակուրի աման, քառաթաղի բաժիններով, 28 հրդ. բարձր, կլայեկուած: Ունի կիսալուսնաձև թռնատեղի, եւ երկու կողերուն՝ զարդարուն փակիչներ, ամբողջութեամբ լաւ զարդափորագրուած: Հրէական յախճապակիի մը հետ փոխանակած եմ այս ամանը, հրեայ մեծահարուստ Տիար Հէրրի Ֆրիտմանէն: Առաջին ամանաբաժնին քառակուսիին մէջ կը կարդանք. «ԱՆԱՆԻԱՅ ՈՐԴԻ ԱՍԱՏՈՒՐԻ»: Իսկ կափարիչի առաջին դօտիին մէջ, «ԱՆԱՆԻԱՅԻ ՈՐԴԻ ԱՍԱՏՈՒՐԻ ԹՎԻՆ ՌՃՁԶ (= 1737): Երրորդ ամանին վրայ. «ԱՆԱՆԻԱՅԻ ՈՐԴԻ»: Լաւ շինուած աման մըն է, նրբաձեւ քանդակներով:

Թիւ 21

Կերակուրի աման, եռաթաղի, զարդաքանդակուած, կլայեկուած, 25 հրդ. բարձրութեամբ: Պահած է իր զոյգ պահիչները եւ կէսօղակաձեւ թռնատեղին: Գլխաւոր կափարիչին վրայ կը կարդանք. «ԽՈՊԵՏ» (Հայրապետ?): Բազմաքանդակ է ամանս:

Թիւ 22

Միւռնի աման, պարզ ու երկար ծորակով, երեսները տափակ, կափարիչը կորսուած, 32,5 հրդ. բարձրութեամբ, անզարդ, նստած է ձուածեւ ոտքի վրայ: Մէկ երեսին, 11 հրդ. տարածութեամբ արձանագրութիւն մը կայ. «ԵՂԻԱՋԱՐԵԱՆ ԵՂԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԶԵՌՄԱՐ ՅԻՇԱՏԱԿ Է Ս(ՈՒՐ)Բ ՄԵՐՈՆԻ ԱՄԱՆԸՍ ԱՆԹԱՊՅԻ ՂԱԶԱՆՃԻ Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի ՍԱՀ(Ա)Կ ՓԱՆՈՍԻՆ Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՆՈՐԻԶԱՅ ՅԱԹՈՌՈՒՆ ՈՐ Է ԿԻԼԻԿԻՈՅ»:

Թիւ 23

Միակամք փարջ, տակը տափակ, 16 հրդ. բարձրութեամբ, կափարիչը կորսուած, կլայեկէն ամբողջապէս մաքրուած, ոսկեփայլ, գեղեցկաքանդակ: Ճիշտ կէսին, կլոր դօտիի մէջ. «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՄՂՏՍԻ (Մահտեսի) Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐ ՈՐԴԻ ՂԱՐԱՅՍԱՐՑԻ ՅԱԿՈԲ ԹՎ(ԻՆ) ՌՃԽԹ» (= 1700):

Թիւ 24

Կերակուր եփելու աման, կափարիչով. կլայեկէն մաքրուած, ոսկեփայլ պղինձ, 13,5 հրդ. լայնքով եւ 9,5 հրդ. խորութեամբ, բոլորովին անզարդ. կափարիչը վերեւի կողմէն ունի խոշոր կոճակի նման թռնատեղի. զարդաքանդակուած է, որուն արտաքին դօտիին

մէջ կը կարդանք. «ՄՈՒՐԱՏ ԹՎԻՆ ՌՀ (= 1621): Կափարիչին վրայ մէկը արաբագիր երեք բառեր փորագրել փորձեր է:

Թիւ 25

Թաս, չափ զարդարուն եւ գեղեցկաքանդակ, 12 հրդ. խորութեամբ եւ 22 հրդ. լայնքով: Շատ ընտիր գործ է, ունի նաեւ արաբագիր զարդեր, թռչուն, նապաստակ, եւն...: Վերի շրթունքին կը կարդանք. «ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ ՍՈՒՔԻՆ»: Հաւանօրէն աւելի ուշ, դարձեալ ամանին վերին շրթունքին արտաքին մասին վրայ փորագրուած է. «ԱՆՆԱՐԻ ՈՐԴԻ ԲԱՐՍԵՂ»:

Թիւ 26

Սան, ընտիր զարդափորագրութիւններով, 32 հրդ. լայնքով եւ 16 հրդ. խորունկ: Արաբագիր եւ հայկական զարդերով ճոխ: Արտաքին դօտիին շրթունքին վրայ կը կարդանք. «Տ(Է)Ր ՆԷՐՍԷՍԻՆ Է ԹՎԻՆ ՌՃԾԹ» (= 1710): Ամէնէն զարդարուն եւ ընտիր նմոյշն է հաւաքածոյիս:

Թիւ 27

Թաս, անազապղինձէ, թափօն, չափ ընտիր հայկական զարդազօծերով, 12,5 հրդ. խորութեամբ եւ 24 հրդ. լայնքով: Արտաքին շրթունքին վրայ փորագրուած է. «ԾԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ՄԱՐԳԱՐԱՅ ԹՎ(Ի)Ն ՌՀԵ» (= 1626):

* * *

Հաւաքմանս պզճեայ խոշոր փսէներու շարքը ներկայացնելու առաջ՝ ահա՛ քանի մը ոչ-պզինձ ուրիշ իրեր, որոնք նոյնքան շահեկան են՝ մեր մանր արուեստներու պատմութեան համար:

Թիւ 28

Մկրատ մը, երկաթեայ, արծաթադրուադ, 28,5 հրդ. երկարութեամբ. մէկ կողմը՝ արծաթադրուադ, գրուած է, սղագիր. «ԲՐԻ(ստոսի) Ծ(ա)Ռ(այ)», իսկ միւս կողմը «ՄՈՎՍԷՍ»:

Թիւ 29

Թաս բաղնիքի, անզարդ, պղնձախառն արոյրէ, 19,5 հրդ. լայնքով ու 6,5 հրդ. խոր: Վերի շրթունքին փորագրուած է «ՏՈՒՏՈՒ ՎՎՎ»:

Թիւ 30

Օղիի ամանի երես, անադէ: Ս. Գէորգի նկարին վերեւ ունի արձանագրութիւն, այսպէս. «Գէորգ ԹՎԻՆ ՌՃԾ» (= 1701): Իսկ ստորին գօտիին վրայ. «ԹՈՒՆԱԹՅԻ ԱԿՈՒՅԻՆ ԲԱՆ Է»⁵

Թիւ 31

Օղիի աման, վերինին նման: Թուականէն կը կարդացուի միայն 17...: Իսկ վիշիպասպան ձիաւորին վերեւ կը կարդացուի յունարէն «նիֆոլայ»:

Թիւ 32

Տուփի մաս, երկերես, արոյրէ, որուն մէկ երեսին վրայ խորունկ փորագրուած են Յիսուսի խաչերութեան եւ միւսին վրայ խաչէն վառ առնուելու տեսարանները: Վերջինիս գլխամասին՝ որոշ կը կարդացուի, բակադրեալ «ՎԱՐԴԱՊԵՏ»: Եզերամասը, որ շատ մաշած ու քերթուած է, գուցէ ներկայացնէ «ՁՈՒՂԱՅԵՑԻ ՄԻՔԱՅԷԼ» եւ դեռ քանի մը գիրեր:

* * *

Խոշոր ամսեւները՝ որ այժմ պիտի նկարագրեմ հոս, ծեծուած պղինձէ են, եւ ո՛չ թէ մեքենայով պատրաստուած հասարակ թերթերէ: Ասոնք կը գործածուէին իբր սեղան՝ ուղղակի գետինը դրուած, կամ գորգի վրայ, կամ ալ մէկ ոտք բարձրութիւն ունեցող տախտակէ կլոր սեղաններու վրայ:

Թիւ 33

Խոշոր ամսեւ, անդլիական 35 մատնաչափ (ինճէզ) տրամագիծով, որուն արտաքին լայն գօտիին մէջ կը կարդանք. «ՄՂՏ(Ե)ՍԻ (= Մահտեսի) Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ԹՈՐՈՍԻՆ Է ԹՎ(ԻՆ) ՌՃԿԲ» (=1713):

Թիւ 34

Խոշոր ամսեւ, անդլիական 29 մատնաչափ տրամագիծով, զարդաքանդակուած: Արտաքին շրթունքին, վատ նօտրագրով կը կարդանք. «Քիրքում (Հաւանարար՝ Գրիգոր) ջէլէպի ք(վիմ) ՌՃՀ» (= 1721):

5. Ասոնց մասին երկար գրած եմ «Հասկ - Հայագիտական Տարեգիրք»-ի մէջ, Գ. տարի (1957), Անթիքիս, էջ 110-120. Հայ անագեղէն եւ յախճապակեայ օղիի ամաններ» խորագրով. սոյն կտորին նկարը տուած եմ անդ՝ էջ 111 (Յ. Ք.:

Թիւ 35

Խոշոր ամսեւ, անդլիական 33.5 մատնաչափ տրամագիծով, լաւ զարդաքանդակներով: Ծաղկեփունջի մը տակ՝ կը կարդանք. «Ա(Ս-ՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐԻ»:

Թիւ 36

Խոշոր ամսեւ, անդլիական 23 մատնաչափ տրամագիծով. կլայեկը մաշած եւ ամսէին եզերքները տեղ տեղ նորոգուած: Վրան՝ երկու տողի մէջ՝ կը կարդանք. «ՄՂՏՍԻ (= Մահտեսի) ԽԱՉԱՏՈՒՐԻՆ Է ԹՎ(ԻՆ) ՌՃԾ (= 1701)ԻՆ»: Քովը՝ մէկ տողի վրայ, թուրքերէն կարճ արձանագրութիւն մը կայ:

Թիւ 37

Խոշոր ամսեւ, անդլիական 27.5 մատնաչափ տրամագիծով, մեծաքանդակ, կլայեկը մաշած: Արտաքին եզերքին կը կարդանք. «ՄՂՏԻՍԻ (= Մահտեսի) ՄԿՐՏԻՉԻՆ ԹՎԻՆ ՌՃԻԵ» (= 1676):

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

2

ՅՈՒՑԱԿ

«Յ. ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱԻԱՔԱԾՈՅ»Ի

ԱՐԾԱԹԵԱՅ ԻՐԵՂԵՆՆԵՐՈՒ

ՈՐՈՆՔ ՊԵՏԻ ՊԱՀՈՒԻՆ ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ
ՄԵԻԹԱՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԵՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆԸ
ՈՐՔԱՆ ՈՐ ԱՆԻԿԱ ԻՐ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ՊԱՀԷ
ԻՐ ԶԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԹԻՒ 1

Գաւաթ արծաթեայ, կանթաւոր, տափակ յատակով, 14.5 հրդմ. լայն, 6.5 հրդմ. խորունկ. զեղեցկօրէն ծաղկեքանդակուած: Կոթին աղանձեւ ունելիին ձախ թեւին՝ արծաթը վաւերացնող օսմանեան կայսերական կնիք:

ԹԻՒ 2

Գաւաթ, նման առաջինին, աւելի խոշոր զարդաքանդակներով: Գաւաթին յատակը՝ քանդակուած է Մովսէս մարգարէն, նստած, տասը պատուիրաններու տախտակով: Գաւաթին երեսներուն՝ երեք սլափալեքացում. Աւետման, Ծննդեան եւ Ընծայման:

ԹԻՒ 3

Գօտիի ցաւմանդ, «Գառն Աստուծոյ» քանդակով, 8.5 հրդմ. երկար: Տերեւաձեւ ճարմանդին աւելցուած են, հաւասարաչափ հեռաւորութեամբ, հինգ օղակներ, հաւանօրէն՝ իբր վզէն կախելու զարդարանք գործածելու համար օտարներէ: Այժմ՝ փոքր դրամներով եւ հօւլունքներով զարդարուած է:

ԹԻՒ 4

Քրիստոսի խաչելութիւն մը, հաւանաբար Մաշտոցի կամ Աւետարանի մը երեսէն հանուած, 8 հրդմ. լայնքով: Արծաթի վրայ՝ ոսկեջուր. Քրիստոսի փրկուն վերեւ՝ կանանչ, իսկ թեւերուն քովերը՝ կարմիր ոսկեվարդեր, զարդաքարերով: Մետալին չուրջ, միագիծ տողի վրայ՝ կը կարդանք. «ՅԻՇ(Ա)Տ(Ա)Կ Է Ս(ՈՒՐ)Բ ՊԱԶՍ ԳՐԻ-

ԳՈՐԻՆ ԹՎՐԻՋԻՆ ՎԱՅԵԼՈՒՄՆ Տ(Է)Ր ՄԻՆԱՍԻՆ ԹՎԻՆ ՌՄԺԷ»
(= 1768):

ԹԻՒ 5

Խոբանի խաչ, որուն կոթը ինկած կորսուած է: Կէս երեսին՝ չորս վարդեակներ, Յիսուայի խաչելութեամբ, ոսկեջրած. իսկ միւս երեսին կեդրոնը միայն ոսկեջրած վարդեակ մը, թուրքի յիշատակարանով. «Յ(Ի)Չ(Ա)Ս(Ա)Կ Է Ս(ՈՒՐ)Բ խաչս իստամպուլցի մզ(տե)ցի (= մահտեսի) ՅԱՆԱՄԻՆ. մօրն իսաքում քաշային հոգւոյն. Նիկտայ քաղաքին ի դուռն ս(ուր)ք Կարայպետ եկեղեցոյն. ԹՎ(ԻՆ) ՌԻԳ» (= 1574):

ԹԻՒ 5A

Սկիւի մը ստորին մասը, կեդրոնը ծակով, 16 հրդմ. լայն. զարդաքանդակեալ է «Գառն Աստուծոյ», չուրջը հրեշտակներ՝ անշատ կլորակներու մէջ: Կեդրոնը ունի արծաթի վաւերացման աուլթանական կնիք, հաւանաբար ԺԸ. դարու երկրորդ կէսէն: Թասաձեւ այս նստոցը, եղբրք օղակներ անցընելով, թելագործ կլոր զարդեալով ճոխացած, հաւանօրէն գործածուած է իբրեւ կնոջական գլխաւոր: Զարդերէն մէկ քանին այժմ կը պահպին:

ԹԻՒ 6

Արծաթեայ կլորակ մը, 12 հրդմ. լայնքով, գուցէ քահանայի մը բակեղին մաս. ունի ամրացման չորս ծակեր: Վրան քանդակուած է խաչելութիւն մը, նախնական արուեստով. անվարժ գրչութեամբ յիշատակարան մը, ներս-ծեծուած գիրերով կ'ըսէ. «Յիշատակ է Նորսէսին ս(ուր)ք խաչս Հօղա ս(ուր)ք Թորոսի եկեղեցին վարքեցիին»:

ԹԻՒ 7

Վերամաս ցաւմանի՝ խորանի վրայ գետեղելու. ունի պտուտակաւոր մասը, սակայն կոթը կորսուած է: Կեդրոնը՝ «Գառն Աստուծոյ», ոսկեզօծեալ, 16 հրդմ. մեծութեամբ:

ԹԻՒ 8

Քրիստոսի գերեզմանին տեսարանը՝ ոսկեջրեալ, հանդերձ այցելու կրնորով. ընտիր գործ: Փորագրուած յիշատակարանը կ'ըսէ. «ՅԻՇԱՏԱԿ Է ԱԻԵՏԱՐԱՆՍ ԲԵՆԿԱՑԻ ՂՕՆՋԻԿԻԼԵԱՆ ՀԱՆԳ(ՈՒՑ)ԵԱՆ ՄԱՀՏԵՍԻ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐ ԱՄԻՐԱՅԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Բ ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑ(ԻՈՅՆ) ՅԱՄԻ Տ(ԵԱՌ)Ն ՌՊԻԳ (= 1823): 24 հրդմ.

լայնքով՝ ունի 18 հրդմ. բարձրութիւն: Հաւանաբար՝ Իւղաբերից Աւետարանի մը կողքին մէկ էջն է:

Թիւ 9

Ոստրէի կափարիչ մը՝ Վրան աղաւնի մը քանդակուած: Եկեղեցական հաղուստի նախմանդ:

Թիւ 10

Հաւասարաթել խաչ մը, հաւանաբար Մաշտոցէ մը հանուած: Վրան փորագրուած է. «Տ(է)Ր Յ(ԻՍՈՒ)Ս Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ»:

Թիւ 11-12

Արծաթ շրջանակով, խոշոր, մարգարտազարդ ու դոհարազարդ, մօտաւորապէս՝ մարդու ափի մեծութեամբ, դրեթէ արտաձեւ ու դեղեցիկ զարդեղեցներ, որոնք յետոյ վերածեր են գիրք բռնելիքներու, արծաթ տախտակի վրայ հաստատելով: Ժէ. դարու հայկական ազնիւ աշխատանքներ են. մարդարիտներէն ոմանք թափած:

Թիւ 13

Փոքր տուփ, ոճաւորեալ, կափարիչը կէտկիտուած թելերով, ընտիր աշխատանք: Տուփին տակ, երեք տողի վրայ, հրեշտակի մը գլխուն ներքեւ կը կարդացուի. «Ի Վ(ԱՅ)ԵԼՈՒՄԸՆ ՇՈՂԱԿԱԹԻՆ 1846ԻՆ ՀՈԿՏԵՄ(ԲԵՐԻ) 15»: Երկայնութիւնն է 7 հրդմ. իսկ լայնութիւնը՝ 5:

Թիւ 14

Խորանի խաչ, գեղեցկաչէն, տակեջրեալ հրեշտակազուխներով. մէկ կողմը՝ Ս. Կոյսը, Յիսուս մանուկով, միւս կողմը՝ խաչելու թեամբ: Ունի խորանին վրայ կանգուն պահելու մասը, որուն ասորին կը որոտքին մէկ մասը կոտրած կորսուած է:

Թիւ 15

Խորանի նախանի, կեդրոնի ապակեմասը կոտրած ու պարապ մընացած: Թելազործ հայկական ընտիր ոսկեջրեալ աշխատանք: Ունի 35 հրդմ. բարձրութիւն եւ 20 հրդմ. լայնք:

Թիւ 16

Ոսկեջրեալ կազմերես, հաւանաբար Իւղաբերից Աւետարանի, 31 հրդմ. երկայնքով՝ 22 հրդմ. լայն: Կեդրոնը՝ խոշոր հաւկթաձեւ

պրակաշրջանակի մը մէջ՝ աղանակերպ Ս. Հոգին, խաչակիր Քրիստոս, երկնաւոր Հայրը, երկրագունդը մէջտեղ: Ծաղկազարդ գօտիով, ընտիր ու մաքուր աշխատանք, հաւանաբար՝ Կ. Պոլսոյ գործ:

Թիւ 17

Սաղաւարտ, տնօրինական տեսարաններու քանդակներով, խոշոր եւ ծանր, վրան խաչազարդ, ներսէն՝ մանիչակագոյն թաւիչով պատած: Բոլորովին արծաթով պատած այս աղաւարտը՝ զանազան մասերէ շինուած է: Յիսուսի խաչելութեան վերեւ կը կարդացուի. «Յ. Ն. Թ. Հ.»:

Թիւ 18

Սաղաւարտ մեծ, դրեթէ նման նախորդին, քիչ մը աւելի ընտիր գործ:

Թիւ 19

Խոշոր աշտանակ, ոչ բարձրորակ, ափսէն՝ 33 հրդմ. լայնքով, 21 հրդմ. բարձր: Հաւանաբար՝ աշտանակին կանգուն մասը կոտրած էր ատեն մը, եւ յետոյ՝ նոյնիսկ արձանագրութենէն մաս մը կտրելով՝ նորոգուած: Աշտանակին ստորամասին՝ կը կարդանք. «Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ՇԱՄՏԱՆՍ ԽԱՉԱՏՈՒՐ Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)ՏԻՆ Ի ՎԱՅԵՇ(Ա)Ն ՍԲ ՅԵ(ՐՈՒՍԱՆ)ԻՄԱ ԱՊԱՆՋՈՐԴ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԼՈՒՄՆ ՍԲ ՅԵ(ՐՈՒՍԱՆ)ԻՄԱ ԱՊԱՆՋՈՐԴ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԹՎԻՆ ՌԺՀԱ (= 1722)ԻՆ»: Յիշեալ Գրիգոր Վարդապետը է նոյն ինքն Շիրվանցի Շղթայակիրը:

Թիւ 20

Կանթեղ, եռանկիւնաձեւ, վիշապազարդ. ապակեայ մասը կոտրած կորսուած է. ունի երեք շղթաները եւ յարակից մասերը: Վերի շղթանքին ունի սուղթանական կնիք՝ արծաթ ընթալը վաւերացնող: Երկարութիւնն է 27 հրդմ.: Գործ՝ թերեւս ոչ հայկական եկեղեցիի համար:

Թիւ 21-21A

Բաղնիքի տախտակեայ արծաթապատ գոյգ մը ունամաններ, շատ հաղուազիւտ. ունին սուղթանական արծաթանիշ կնիք՝ ոտնամանի երեսապատ մասերուն վրայ:

Թիւ 22

Եղջիւրաքաժակ արծաթազարդ, հաւանաբար՝ Կովկասահայ արուեստագործի աշխատանք:

Թիւ 23

Խնկաման, սուլթանական արծաթանիշ կնիքով, կոթին եւ շըրթունքին վրայ:

Թիւ 24

Նամակատուի, արքունի թղթատարի ուսէն կախուելիք. հայկական շատ ընտիր աշխատութիւն, մօտաւորապէս 15×20 հրդմ. մեծութեամբ:

Թիւ 25

Փոքր տուփ, հայարուեստ: Յիշատակարան ունի. «Ի վայելումն Մարքաին»: Վրան՝ սուլթանական արծաթանիշ կնիք, ԺԸ. դարու:

Թիւ 26

Փոքր տուփ, ոսկեջրեալ, առանց արձանադրութեան. հայկական արուեստ:

Թիւ 27

Փոքրիկ տուփ, տակը կտրուած, եզերքին՝ լաւ չզարնուած սուլթանական արծաթանիշ կնիք:

Թիւ 28

Փոքր տուփ մը, նախորդէն քիչ մը աւելի մեծ, Քրանսական ուճով, Կ. Պոլսոյ սիրուն գործ, հաւանաբար՝ ԺԸ. դարու սկիզբէն:

Այս չորս փոքրիկ տուփերու մեծութիւնն է՝ 4×6 հրդմ. մօտաւորապէս:

Թիւ 29

Արժուոյի քեւկապ, սուլթանական, նուրբ բանուած, ընտիր արծաթադործութեամբ:

Թիւ 30

Տուփ, 12 հրդմ. երկար, քառանկիւն, նախորդներուն նման՝ ընտիր հայկական գործ, սուլթանական արծաթանիշ կնիքով:

Թիւ 31

Ճարմանդ, ոսկեջրած, հայկական նուրբ «չիֆթ իշի» թելադործութեամբ:

Թիւ 32

Գլխու քաւ, կնոջական զարդ, հայկական թելադործ, ոսկեջրած, շուրջ 10 հրդմ. մեծութեամբ:

Թիւ 33

Ծխամորճի գլուխ, արծաթաթել հայկական աշխատանք, ոսկեջրած:

Թիւ 34

Գլխու քաւ, կնոջական զարդ, սեւակիտուածեալ, ներսէն՝ ոսկեջրած, հայկական արծաթադործութեամբ:

Թիւ 35

Գլխու քաւ, նման նախորդին:

Թիւ 36

Բաղնիքի ջրաման, 17 հրդմ. լայն, 12 հրդմ. բարձր, սուլթանական արծաթանիշ կնիքով՝ շրթունքին:

Թիւ 37

Բաղնիքի ջրաման, նման նախորդին, եւրոպական ուճով ծաղկուած՝ հայկական գործ Կ. Պոլսոյ. սուլթանական արծաթանիշ կնիքը՝ ամանին կեդրոնը:

Թիւ 38

Հին ջրաման, ընտիր, գեղեցկօրէն քանդակուած, Քրանսական ուճով:

Թիւ 39

Ճամանչ խորանի, ընտիր եւ ամբողջական, ոսկեջրած, կարմիր զարդաքարերով, փոքր եռատերեւ կիտուածիկներով. կոթին վրայ՝ խորաքանդակ կը կարդացուի. «Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԱՐԱՊԵԱՆ Մ(Ա)Հ-Տ(ԵՍ)Ի ՅԱՐՈՒԹԻՆ ԹՎԻՆ ՌՄԾԷ» (= 1808):

Թիւ 40

Յղութեան փոքր «Թալիսման», արծաթեայ, հայ գեղական արուեստով, ԺԸ. դարէն:

3

ՅՈՒՑԱԿ
«Յ. ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅ»Ի
ԱՐԾԱԹԵԱՅ ԿԱՂԱՄԱՐՆԵՐՈՒ
ՆՈՅՆՊԵՍ ՆՈՒՒՐՈՒԱԾ
ՎԵՆԵՏԻԿԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ
ՄԵԻԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐՈՒՆ

Կաղամարներու այս հաւաքածոս ալ երկար ժամանակի ընթացքին խնամքով հաւաքած եմ, եւ այժմ հաղուադիւտ են: Բոլորն ալ ունին սուլթանական արծաթանիշ կնիք, եւ ոմանց վրայ կարելի է շինողին անունը կարդալ: Սուլթանական արծաթանիշ կնիքները ցոյց կու տան կտորներուն հնութիւնը, քանի որ չատեր կան՝ նոր չինուած, զուրկ վաւերականութենէ:

Կաղամարներուն երկար մասը գրչապահ տոսին է, որուն նեղ մասին վրայ՝ օղակաձեւ փոքր կլորակէն հաւանաբար կախուած կ'ըլլար փոքր ծոպ մը, որ քաշելով՝ կը քացուէր գրչափակ մասը, եւ դրագիրը կրնար գրիչը հանել՝ գործածելու համար: Գրչատուփին գլխուն մօտ ագուցուած է՝ գրեթէ քառակուսի տուփ մը, որ կաղամարն է. դժբախտաբար՝ յաճախ կը պակսի մէջի ապակեայ մասը: Կաղամարամասը՝ երկու ծխնի ձողիկներով՝ կափարիչ մասն է դըրչատուփին. այս կափարիչն ալ՝ իր կարգին՝ ունի փոքրիկ փակիչ մը, որ մատի շարժումով կարելի է դարձնել, եւ բանալ կամ փակել կաղամարին կափարիչը՝ ըստ ցանկութեան: Կաղամարը գործածուելէ վերջ, երկար մասը կը խրուէր գրագիրին գօտին մէջ:

Կաղամարներու այս շարքը ԺԸ. եւ ԺԹ. դարերէն է. անկարելի է որ հայ ոսկերիչներ կամ արծաթագործներ չըլլան ասոնց հեղինակներէն ոմանք: Թուականները, անշուշտ, գծուար պիտի չըլլայ ըստուգել՝ արծաթանիշ կնիքներէն, որոնք սուլթանական «թուրա»ներ կը ներկայացնեն. նոյները կ'երեւին նաեւ իրենց «Փերման»ներուն տակ, ինչպէս նաեւ իրենց զարնել տուած ոսկի կամ արծաթ դրամներուն վրայ:

Թիւ 1

27 հրդմ. երկար, քանդակազարդ՝ գրչատուփին երկու ծայրերը, կաղամարին վերի շրջանակը եւ յատակը: Սուլթանական արծաթա-

նիշ կնիքները կ'երեւին թէ՛ գրչատուփին վրայ եւ թէ՛ կաղամարին տակ:

Թիւ 2

25.5 հրդմ. երկար, փորագրուած՝ նախորդին նման, քիչ տարբերութեամբ: Գրչատուփին գլուխը ունի արծաթագործին արաբագիր անունը: Մեյանատուփին տակ՝ սուլթանական արծաթանիշ կնիք:

Թիւ 3

26.5 հրդմ. երկար, փորագրուած՝ նախորդին նման, քիչ տարբերութեամբ: Գրչատուփին գլուխը ունի շինողին արաբագիր անունը. իսկ կաղամարին տակ՝ արծաթանիշները:

Թիւ 4

20.5 հրդմ. երկար, քոլորովին անզարդ: Շինողին արաբագիր անունը՝ գրչատուփին վրայ, կաղամարին քով: Արծաթանիշները՝ թէ՛ գրչատուփին վրայ եւ թէ՛ կաղամարին տակը: Այս կաղամարը կը տարբերի միւսներէն՝ անով որ կաղամարը գրչատուփին հակառակ կողմը դրուած է. թերեւս ձախիկի մը կը պատկանէր:

Թիւ 5

25 հրդմ. երկար, նման առաջին երեքին, փորագրական քիչ տարբերութեամբ: Շինողին արաբագիր անունը՝ գրչատուփին վրայ, կիսով ծածկուած է կաղամարէն: Արծաթանիշեր՝ գրչատուփին վրայ եւ կաղամարին տակ:

Թիւ 6

29.5 հրդմ. երկար, նման առաջիններուն, փորագրական քիչ տարբերութեամբ: Գրչատուփին վրայ շինողին անունը՝ արաբագիր: Արծաթանիշեր՝ գրչատուփին վրայ եւ կաղամարին տակ: Արծաթին մաքրութիւնը փորձելու համար՝ գրչատուփին վրայ մաս մը մանր կտրուած է, ինչպէս նաեւ կաղամարին տակ, արծաթանիշ զարնող սուլթանական պաշտօնեայէն: Այս եւ յաջորդ երկու կաղամարները՝ աւելի ծանր են քան միւսները, եւ ինչպէս յայտնի է՝ աւելի երկար:

Թիւ 7

32 հրդմ. երկար, նման միւսներուն, փորագրական մանր տարբերակներով: Փորագրեալ մատերը ոսկեջրուած: Զուտ ոսկի զարդարանք մը՝ կաղամարին վրայ, որուն ահանատեղին այժմ պարապ է,

գոհարը վերցնում ըլլալով: Գրչատուփին վրայ՝ շինողին անունը: Կաղամարին տակ՝ սուլթանական արծաթանիշ կնիքը:

Թիւ 8

30.5 հրդմ. երկար, ամբողջութեամբ զարդափորագրուած, եւ ունի քառամաս արաբագիր զարդագրութիւն: Ընտիր գործ: Շինողին անունը կը պակսի: Կաղամարին տակ եւ գրչատուփին վրայ կան սուլթանական արծաթանիշերը:

Թիւ 9

22 հրդմ. երկար, այս հաւաքածոյին հնագոյն եւ ամէնէն բացառիկ կաղամարը: Երեք գրչատուփերը բաժնուած են իրարմէ՝ բաց կտրուած արծաթ աշխատանքով. իւրաքանչիւրը ունի իր առանձին կափարիչը եւ շղթան: Գրչատուփերը եւ կաղամարը (գրեթէ սեխաձեւ) ընտիր փորագրութիւններ ունին: Կաղամարին տակ՝ սուլթանական արծաթանիշ կնիք: Կաղամարին կափարիչին վրայ զուտ ոսկի մանր գրուած մը եւ մէջը՝ զմրուխտ: Անսովոր եւ գեղեցիկ կաղամար մըն է:

Թիւ 10

Սեղանի ընտիր կաղամար, իր նախնական փոքր ապակեմասով. արծաթանիշ կնիք զարնուած է ամանին տակի տերեւին վրայ, դրժուար նշմարելի: Գեղեցիկ նմոյշ մըն է Կ. Պոլսոյ հայ տակերչութեան:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Յ. ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅ»ի պղնձէ եւ արծաթեայ վերոյիշեալ առարկաները, հայկական արուեստի գեղեցիկ ու քանկարժէք մնացորդներ, համառօտակի այսպէս նկարագրուած՝ նոյն ինքն Տիար Յ. Քիւրտեանէ, իր կեանքի վերջին շրջանին, բոլորն ալ անաղարտ վիճակով ու ապահովագրեալ հասած են վեցստիկ - Ս. Ղազար՝ իր իսկ ողջութեամբ, եւ այժմ խնամքով ցուցադրուած են՝ Մխիթարեան Թանգարանին մէջ, մասնաւոր ապակեդարանի տակ:

Յաջորդաբար՝ Ս. Ղազար հասած են նաեւ Յ. Քիւրտեանի բոլոր հայերէն ձեռագիրները, Կուտիմահայ յախմապակիները, եւ այլ կարեւոր հրատարակութիւններ ու դիւանային քուղթեր, որոնց մասին պիտի խօսինք ուրիշ առիթով:

ՇԵՆՈՐՀ ԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱՂԱՅԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ. - Երկեր (Բանաստեղծութիւններ, վէպեր, հէքիաթներ եւ զրոյցներ, մանկական պատմութեանքներ): Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1979, էջ 656, տպաքանակ՝ 51.000:

ԱՇՈՏ ԳՈՒՍԱՆ. - Սրտի մուգներ: Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1979, էջ 112, տպաքանակ՝ 5.000:

ԱՌԱՔԵԼԵԱՆ Վ. Դ., ԽԱԶԱՏՐԵԱՆ Ա. Յ., ԷԼՈՅԵԱՆ Ս. Ա. - Ժամանակակից Հայոց լեզու (հատոր Ա.): Հնչիւնաբանութիւն եւ բառագիտութիւն: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ. 1979, էջ 488, տպաքանակ՝ 3.000:

ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ ՎԻԼԷՆ Ա. - Առողջ մանուկ (Բժշկական, մանկավարժական նկատողութիւններ): Երեւան, «Հայաստան» Հրատ. 1979, էջ 347, տպաքանակ՝ 20.000:

ԲԱԿՈՒՆՆԵԱՆ ԱՎՍԵԼ. - Միքիաւ: Պատմութեան (Յառաջաբանը եւ իմք. Ս. Արզումանեանի): Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1979, էջ 172, տպաքանակ՝ 10.000:

ԲԱՅՐՈՆ ԶՈՐՋ ԳՈՐԴՈՆ. - Պոեմներ (Անդլիերէնից թարգմանեց՝ Հենրիկ Սեւան): Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1979, էջ 160, տպաքանակ՝ 5.000:

ԲԱՐԱՌՈՒՍԿԱՄ ՎԻՏԱՌՈՒՏԱՄ. - Օրօրոցային (Լիտվերէնէ թրգմ. Ա. Կոսեան, նկարազարդեց՝ Մ. Ս. Սարգսեան): Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1978, էջ 8 (մեծադիր), տպաքանակ՝ 30.000:

ԲԵՍ ԳԱՐԵԳՐԻ Բ. - Իմ Զարեմքը: Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1979, էջ 335, տպաքանակ՝ 5.000:

ԲԱՅՏՈՆ Է. - Հռչակաւոր բաղիկ Տիմը: (Ռուսերէնէ թրգմ. Անահիտ Սահին-

եան, նկարազարդեց՝ Գ. Եսաբեան): Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1978, էջ 40, տպաքանակ՝ 50.000:

ԳԱԼՍՏԵԱՆ ԹԵՐԵԶԱ Յ. - Գաղտնիք Լեւոնեանը եւ «Գեղարուեստ» համագէտը: Երեւան, ՀՍՍՀ Պետ. Հմլ. Հրատ. 1979, էջ 268, տպաքանակ՝ 1.500:

ԳԱՐՍԻԱ-ՄԱՐԿԵՄ ԳԱՐԻԻԷԼ. - Հարիւր տարուայ մեմուքիւմ (Ռուսերէնից թարգմանեց՝ Ռուբէն Յովսէփեան): Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1979, էջ 448, տպաքանակ՝ 30.000:

ԴԱՒՈՅԵԱՆ ՌԱԶՄԻԿ. - Տխուր փիղը (Պատկերազարդ, նկարիչ՝ Հ. Համեան): Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1978, էջ 36 (մեծադիր), տպաքանակ՝ 20.000:

ԹԱՐՎԵՐԴԵԱՆ ԵՈՒՐԻ ԱԼ. - Ստեփանոս Լեւոնցու փիլիսոփայական հայեացքները: Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ. 1979, էջ 155, տպաքանակ՝ 1.500:

ԻՇԽԱՆԵԱՆ ՌԱՅԱՅԷԼ Ա. - Նոր գրական հայերէնը (XVII-XVIII դդ.): Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Պետ. Հմլ. Հրատ. 1979, էջ 152, տպաքանակ՝ 2.000:

ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱԻԵՏԻՔ. - Երկերի ժողովածու, հատոր 2. (Նամակներ): Կաղմեցին՝ Արամ եւ Արմիկ Ինճիկեաններ: Երեւան «Սովետական Գրող» Հրատ. 1979, էջ 432, տպաքանակ՝ 60.000:

ԼԱՆՑՈՎ ՆԻԿՈԼԱՅ. - Ոսկէ ուղկամ: Երեւան, «Սովետական Գրող» Հրատ. 1979, էջ 56, նկարազարդ, տպաքանակ՝ 10.000:

ԽԱՆԶԱԴԵԱՆ ԷՄՄԱ Վ. - Էլան-Դարանի (Պատմահնագիտական ընդարձակ ուսումնասիրութիւն՝ Էլան-Դարանի ամբողջ մասին, որ կը գտնուի Երեւանի մօտ, այժմեան Արուիկեան քաղաքի շրջակայքը. քննութիւն պետուած նիւթերու եւ պատմական վերակառու-